ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

1 .ՀՀ Գեղարքունիքի մարզի Զոլաքարի համայնքապետարանի գլխավոր մասնագետ (ծածկագիր 2.3-2)

- ունի բարձրագույն կրթություն, համայնքային ծառայության կամ պետական ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա ստաժ կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ կամ վերջին ութ տարվա ընթացքում համայնքի ավագանու անդամի աշխատանքային գործունեության առնվազն երկու տարվա փորձ կամ առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, իսկ ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի պաշտոնի դեպքում՝ առնվազն երեք տարվա մասնագիտական գործունեության փորձ աուդիտի ոլորտում մինչև 2015թ. հունվարի 1-ը համայնքային ծառայության պետական և (կամ) համայնքային կառավարման ոլորտի առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ.

- ունի <<Համայնքային ծառայության մասին>>, <<Տեղական ինքնակառավարման մասին>>, Հայաստանի Հանրապետության օրենքների, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.
- տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը.
- ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.
- տիրապետում է ռուսերենին /ազատ/ և մեկ այլ օտար /կարդում, կարողանում է բացատրվել/ լեզվի:

- կատարում է քարտուղարի հանձնարարությունները՝ ժամանակին և պատշաճ որակով.

- հետևում է քարտուղարի հանձնարարականների, համապատասխան ժամկետներում, կատարման ընթացքին, որոնց արդյունքների մասին զեկուցում է քարտուղարին.

- քարտուղարի հանձնարարությամբ ուսումնասիրում և առաջարկություն է ներկայացնում

-իրականացնում է համայնքի հացահատիկային և այլ դաշտավարական կուլտուրաների սերմարտադրության ագրոտեխնիկական հսկողության և հետևում է սերմերի, քիմիկատների, պարարտանյութերի ներկարման գործընթացին, ուսումնասիրում է դրանց պիտանելիությունը և զեկուցում իր անմիջական ղեկավարին.

-նպաստում է համայնքի սերմարտադրության և տոհմաթարմացման գործընթացներին, առաջարկություններ է ներկայացնում հողային ֆոնդի նպատակային օգտագործման մասին.

-համագործակցում է անասնաբուժական ծառայության հետ համայնքի անասնագլխաքանակի վակցինացիայի ժամանակ

- մասնակցում է համայնքի բնակիչներին պոտենցիալ անասնագլխաքանակի և թռչունների հաշվառման գործին, հետևում է համայնքի բնակիչների կողմից հողային օրենսդրության պահանջների կատարմանը,

- իր կողմից մշակված իրավական ակտերի նախագծերի, ծրագրային փաստաթղթերի և նյութերի փորձաքննության ուղարկելու անհարժեշտության մասին առաջարկություններ է ներկայացնում քարտուղարին

Անհրաժեշտության դեպքում, իր լիազորությունների սահմանում նախապատրաստում և քարտուղարին է ներկայացնում առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ.

- ստորագրում է իր կողմից պատրաստվող փաստաթղթերը.

- իրականացնում է քաղքացիների դիմումում-բողոքների սահմանված կարգով քննարկումը և արդյունքները ներկայացնում է քարտուղարին.

- հանդիսանում է համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնի անդամ /նախագահ/ և ունի խնամակալության և հոգաբարձության կանոնադրությամբ նախատեսված իրավունքներն ու պարտականությունները.

- իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

գլխավոր մասնագետն ունի օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված այլ իրավունքներ և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ:

Մրցույթը կկայանա 2019թապրիլի 19-ին ժամը 12:00-ին, Զոլաքարի համայնքապետարանում: Մրցույթին մասնակցելու համար դիմողները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

- դիմում՝ մրցութային հանձնաժողովի անունով (ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս)
- համայնքային ծառայության պաշտոնի անձնագրով՝ այդ պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետմանը ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի (ների), վկայականի (ների) պատճենները՝ բնօրինակների հետ միասին
- արական սեռի անձինք նաև զիվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճեն՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք
- մեկ լուսանկար 3x4 չափսի
- անձնագրի պատճեն (բնօրինակի հետ)
- աշխատանքային գրքույկի (համապատասխան մարմնի կողմից տրված տեղեկանքի) պատճենները
- հայտարարություն այն մասին, որ ինքը չի տառապում Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թ. դեկտեմբերի 15-ի թիվ 1801-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով
- հայտարարություն այն մասին, որ ինքը դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ:

Մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը ներկայացնել անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող փաստաթղթերով: Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր, ժամը 9-ից մինչև 17-ը՝ բացի շաբաթ, կիրակի օրերից՝ Զոլաքարի համայնքապետարան /հասցե 2-րդ

փողոց շենք 17, հեռախոս՝093410024/: Դիմումների ընդունման վերջին ժամկետը 2019թ. ապրիլի 04-ը՝ մինչև ժամը 17 :00-ը :

Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել համայնքապետարանի աշխատակազմ՝ գ. Զոլաքար 2-րդ փողոց շենք 17, հեռախոս՝ 093410024 :

Զոլաքարի համայնքապետարան:

Հասցե՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ, Զոլաքար համայնք, 2-րդ փողոց շենք 17:

ԶՈԼԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ՂԱԶԱՐՅԱՆ